ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Գեղամ Վարդանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվա, 2019թ. հոկտեմբերի 22-ից 24-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) քարտուղարություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Պետության անվանգության ապահովման միջոցների» (INTERPOLITEX-2019) թեմայով 23-րդ միջազգային ցուցահանդեսի և գիտաժողովի ձևաչափով միջոցառմանը:

6. **Քննարկված թեմաները.**

2019թ. հոկտեմբերի 22-ից 25-ը Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում կայացավ «Պետության անվտանգության ապահովման միջոցների» թեմայով 23-րդ միջազգային ցուցահանդեսի և գիտաժողովի ձևաչափով միջոցառումը (INTERPOLITEX-2019), որին ս.թ. հոկտեմբերի 22-ից 24-ը մասնակցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի գլխավորած պատվիրակությունը:

Մասնավորապես, 2019թ. հոկտեմբերի 23-ին տեղի են ունեցել «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողով (ՀԱՊԿ ՌՏՀՄՀ). ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ռազմատնտեսական համագործակցություն. զարգացման միտումներ, խնդիրներ և հեռանկարներ» թեմայի շուրջ քննարկումները, որոնց ընթացքում ելույթ են ունեցել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ Ավետիք Քերոբյանը: Գ. Վարդանյանը խոսել է գիտահետազոտական և գիտատեխնիկական

աշխատանքների մասին՝ կարևորելով ՀԱՊԿ-ի անդամ պետությունների կողմից գիտահետազոտական և գիտատեխնիկական ուղղությամբ աշխատանքների զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև նշելով սույն ոլորտում կարևորություն ունեցող մի շարք այլ հարցեր: Իսկ Ա. Քերոբյանն իր ելույթում ներկայացրել է Հայաստանի ունեցած «Ռազմական տեխնիկայի սպասարկման կենտրոնների ստեղծման փորձը և հեռանկարները»:

Նախարարի տեղակալը և Կոմիտեի նահագահը, մասնակցելով նաև INTERPOLITEX-2019 ցուցահանդեսի աշխատանքներին, ծանոթացել են պետության անվտանգության ապահովման բնագավառում ներկայացված նորույթներին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

INTERPOLITEX-2019 միջոցառման շրջանակներում բարձր տեխնոլոգիաների ոլորտում քննարկվել են հետևյալ հարցերը.

- Բարձր տեխնոլոգիական լուծումները (կիբեռանվտանգություն, ամպային տեխնոլոգիաներ, արհեստական բանականություն, իրերի ինտերնետ, բլոկչեյն, կրիպտոտեխնոլոգիաներ և այլն),
- Նոր սերնդի ցանցերի մշակումը (5G, VR, AR),
- Խելացի քաղաքը՝ հարմարավետ կյանքի համար (Խելացի լուծումներ քաղաքային կյանքի բնագավառում),
- SS լուծումները ռոբոտաշինության համար (նյարդային ցանցեր և թվային էկոհամակարգ),
- Կենսատեխնոլոգիան (խելացի բժշկական լաբորատորիաներ),
- Տնտեսության թվայնացումը,
- Անօդաչու սարքերը, և այլն:

2019թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ Ավետիք Քերոբյանը մասնակցել է ՀԱՊԿ ՌՏՀՄՀ շրջանակներում կազմակերպված՝ ԳԼՈՆԱՍՍ բարձր ճշտության ազդանշանի տրամադրման տիպային պայմանագրի նախագծին և ՀԱՊԿ շրջանակներում համատեղ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման կարգի վերաբերյալ խորհրդակցություններին:

Հոկտեմբերի 24-ին կայացել է հանդիպում Հայաստանի Հանրապետության պատվիրակության և «Սուխոյի քաղաքացիական ինքնաթիռներ» բաժնետիրական ընկերության (ՍՔԻ ԲԸ) գլխավոր տնօրեն Ռավիլ Խակիմովի միջև՝ հայկական կազմակերպությունների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ավիաշինարարական գծով համագործակցության եզրերը, մասնավորապես՝ ներկայացվել են «AERA» ընկերության հնարավորությունները, և հաստատվել է վերջինիս կողմից կոնստրուկտորական աշխատանքների անցկացման գծով մրցույթներին մասնակցելու պատրաստակամությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել Նախարարի տեղակալի ներկայացրած տեղեկատվությանը՝ Հայաստանի

Հանրապետությունում դիմացկունության ստուգման և հետազոտությունների ոլորտում գիտական ներուժի համալրման վերաբերյալ:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

INTERPOLITEX-2019 գիտաժողովը և ցուցահանդեսը մեկ տեղում համախմբել էր ոլորտային քաղաքականության մշակման հարցում որոշիչ դեր ունեցող պաշտոնյաներին և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին ու արդյունաբերողներին, ովքեր հնարավորություն ստացան ոչ միայն ուսումնասիրել տարածաշրջանում ռազմական և տեղեկատվական տեխնոլոգիաների վերջին միտումները, այլև քննարկել կառավարությունների առջև դրված խնդիրների լուծման լավագույն տարբերակները, կիսվել սեփական հաջողությունների փորձով, ներկայացնել սեփական արտադրանքը և ծրագրերը:

Միջոցառման շրջանակներում անցկացնել են նաև խորհրդատվություններ՝ «ՀԱՊԿ շրջանակներում համատեղ գիտահետազոտական և փորձարարանախագծային աշխատանքների կազմակերպման ու անցկացման կարգի վերաբերյալ կանոնակարգի մասին» և «Բարձր ճշգրտության ռուսաստանյան գլոբալ նավիգացիոն արբանյակային ԳԼՈՆԱՍՍ համակարգի ազդանշանին հասանելիության տրամադրման վերաբերյալ ՀԱՊԿ շրջանակներում տիպային երկկողմ միջկառավարական համաձայնագրի նախագծի մասին» ՀԱՊԿ ՀԱԽ որոշումների վերաբերյալ ստացված մի շարք դիտողությունների և առաջարկությունների՝ համաձայնեցման նպատակով:

Հոկտեմբերի 24-ին կայացած հանդիպման արդյունքում որոշվել է դիտարկել «Սուխոյի քաղաքացիական ինքնաթիռներ» ԲԸ-ի և «AERA» ընկերության հնարավոր համագործակցության նպատակահարմարությունը: Բանակցություններն ու աշխատանքները շարունակվելու են հեռակա կարգով, ինչպես նաև հնարավորության դեպքում կազմակերպվելիք հանդիպումների շրջանակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Գեղամ Վարդանյան
29.10.2019թ.